ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ք.Եղեգնաձոր 10 ապրիլի 2019թ.

ՀՀ Վայոց ձորի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>> ընդլայնված նիստ

Նիստի աշխատանքներին մասնակցում են՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Տ.Սարգսյանը, մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ Ն.Ասատրյանը, հաշմանդամություն ունեցող անձինք, հասարակական կազմակերպությունների և հանձնաժողովի անդամները:

Նիստին հրավիրված է Եղեգնաձորի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալ Սամվել Ավետիսյանը և ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժն պետ Վ.Խուդավերդյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Հավաստագրերի հիման վրա աջակցող պարագաների տրամադրման գործընթացը կազմակերպելու համար իրազեկման աշխատանքները մարզում/Ց.Բաբայան/:
2. Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խնդիրները և զբաղվածության պետական ծրագրերը /Ս.Ավետիսյան/:
3. Զինհաշմանդամների սոցիալական երաշխիքները /Վ.Խուդավերդյան/:
4. ՀՀ Վայոց ձորի մարզի հաշմանդամություն ունեցող անձնաց հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները / մարզպետի տեղակալ՝ Ն.Ասատրյան/
5. Քննարկումներ

Մարզպետի տեղակալ Ն.Ասատրյանը ներկայացրեց հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները և նախանշեց դրանց լուծման ուղիները:

Մարզպետ Տ. Սարգսյանը կարևորեց կառավարության հստակ մոտեցումը հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների լուծման գործընթացում: Հավաստիացրեց,որ լուծվելու են հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրման խնդիրները: Մարզպետը տեղեկացրեց նաև որ առաջիկայում միջոցներ են ձեռնարկվելու զինհաշմանդամների վերականգնողական բուժումը կազմակերպելու ուղղությամբ:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Կատարել լայն իրազեկման աշխատանքներ՝ աջակցող պարագաների տրամադրման գործընթացի վերաբերյալ՝ իրավական ակտերի փաթեթը տրամադրել մարզի սոցիալական աջակցության տարածքային գործակալություններին, բուժհաստատություններին, համայնքներին , ՀԿ-ներին :
2. Հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում իրազեկման աշխատանքներ տանել զբաղվածության ծրագրերի վերաբերյալ՝ մամուլի, համացանցի և շահագրգիռ հասարակական կազմակերպությունների միջոցով:
3. Հանձնաժողովի նիստերին հրավիրել համայնքապետարանների սոցիալական աշխատողներին, որպեսզի ներկայացնեն համայնքներում հաշմանդամություն ունեցող անձաց ներառմանն ուղղված աշխատանքները :
4. Կազմել ՀՀ Վայոց ձորի մարզի հաշմադամություն ունեցող անձանց սոցիալական խնդիրների քարտեզը:

Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Ասատրյան

Քարտուղար Ց.Բաբայան

10.04.2019թ.